

ՀՀ հայեցակարգային փաստաթղթերի համապատասխանությունը ժամանակակից պատերազմների բնույթին¹

Խուրշուդյան Լ. Վ.

*ասպիրանտ, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի օգնական,
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ (Երևան, Հայաստան)
lilit.khurshoodyan@gmail.com*

Վճռորոշ բառեր՝ ժամանակակից պատերազմ, Ազգային անվտանգության ռազմավարություն, Ռազմական դոկտրին, ռազմաարդյունաբերական համալիր, Պաշտպանական ռազմավարական վերանայում, պաշտպանություն, ռազմական սպառնալիք, գերճշգրիտ խոցման միջոցներ, արհեստական բանականություն, հիբրիդային պատերազմներ:

Соответствие концептуальных документов РА характеру современных войн

Хуршудян Л. В.

*аспирант, помощник заместителя министра обороны Республики Армения,
НАН РА Институт экономики имени М. Котаняна (Ереван, Армения)
lilit.khurshoodyan@gmail.com*

Аннотация: Скорость действий, применение высокоточного, лазерного и сверхзвукового оружия, гибридно-асимметричный характер — так можно охарактеризовать современную войну.

В последнее время в связи с войнами стали более широко использоваться такие понятия, как «сетцентрическая война», «умная оборона», «превентивная оборона», «3D» (defence, diplomacy, development) стратегия, концепции «жестких», «мягких» и «умных» сил, которые ставят перед государствами, вовлеченными в войны различного масштаба, задачу пересмотреть свои концептуальные документы по безопасности и обороне, а также регулирующие законодательно-юридические основы связанные с ними. В этом смысле Армения тоже не исключение и сталкивается с аналогичной задачей, учитывая, что наши концептуальные документы по безопасности и обороне, в которых излагаются основные вызовы и угрозы национальной безопасности, а также то, как государство собирается противостоять этим вызовам и нейтрализовать угрозы, были приняты еще в 2007 году, а с тех пор в Армении, регионе и мире произошли фундаментальные изменения. В статье представлено соответствие концептуальных документов Республики Армения характеристике современных войн, возможной характеристике военных действий со стороны Азербайджана представляющей прямую угрозу безопасности Армении, и предложены варианты улучшения этих документов.

Ключевые слова: современная война, стратегия национальной безопасности, военная доктрина, военно-промышленный комплекс, стратегический оборонный обзор, оборона, военная угроза, сверхточные комплексы поражения, искусственный интеллект, гибридные войны.

The congruence of the conceptual documents of the Republic of Armenia to the character of modern war

Khurshudyan L. V.

*PhD student, Assistant to the Deputy Minister of Defense of the Republic of Armenia,
NAS of RA Institute of Economics after M. Kotanyan (Yerevan, Armenia)
lilit.khurshoodyan@gmail.com*

Abstract: Swift action; long-range and precision engagement; employment of laser and hypersonic weapons; hybrid and asymmetric features—these are the characteristics of modern war. More recently, war has been attributed with such theories, as Network-Centric Warfare, Smart Defense, preemptive defense, 3D (Defense, Diplomacy, Development) strategy, “hard,” “soft,” and “smart” power. These theories compel the states involved in wars of various scale to revisit their security and defense conceptual documents, as well as the juridical-legal framework regulating the relationships stipulated thereof. Armenia faces this issue as well: our security and defense conceptual documents that encompass the main challenges, and threats, as well as ways for the state to tackle those challenges and offset the threats, have been adopted as early as in 2007. In the meantime, there have been profound changes since in Armenia, the region, and the world as a whole.

The article explores the congruence of Armenia’s conceptual documents to the character of modern war and the characteristics of the possible hostilities by Azerbaijan, while laying down the options for improving the relevant conceptual documents.

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 19T-5B12 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Key words: modern war; National Security Strategy; Military Doctrine; Military Industrial Complex; Strategic Defense Review; defense; military threat; precision munitions; Artificial Intelligence, Hybrid Warfare.

Պատերազմի բնույթը նկարագրող ամենահայտնի բնորոշումներից մեկը, որ պատկանում է հայտնի ռազմավարագետ գեներալ Կլաուզեվիցին, այն նմանեցնում է քամելոնի, որը յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում ինչ-որ չափով փոխում է իր էությունը, թեև ընդհանուր առմամբ դրսևորվում է հետևյալ գերակշիռ միտումներով՝ **բռնություն** (որը պատերազմի նախասկզբնական բնորոշիչն է), **ատելություն ու թշնամանք** (որոնք կույր բնագոյի արդյունք են), **հավանականությունների և պատահականության խաղ** (որոնք պատերազմը վերածում են ազատ հոգևոր գործունեության հրապարակի), **քաղաքականության գործիք** (ինչը նրան ենթակա է դարձնում առողջ բանականությանը) [7]:

Անհերքելիորեն 21-րդ դարը կարելի է բնորոշել, որպես պատերազմի բնույթի կերպափոխման ժամանակաշրջան: Միանշանակ է, որ պատերազմների բնույթն էապես պայմանավորված է գիտատեխնիկական առաջընթացով, այս երկուսը սերտորեն փոխկապակցված են, և հաճախ պատերազմի բնույթն է իր ժամանակահատվածում գիտատեխնիկական նոր մշակումների ու առաջընթացի համար: Այս իրողությունն առավել ակնառու է 21-րդ դարում, որտեղ գիտատեխնիկական նոր նվաճումների և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառությունը կամ հակամարտող կողմի զինանոցում դրանց առկայությունը կարող է էական առավելություն կամ հաղթանակ ապահովել, այն իմաստով, որ դրանց հնարավոր կիրառման վտանգը ինքնին զսպող դեր կարող է խաղալ հակառակորդի կողմից ռազմական գործողությունների դիմելու կամ դրանք ընդլայնելու առումով, օրինակ՝ միջուկային հնարավորություններ, գերճշգրիտ խոցման միջոցներ, արհեստական բանականությամբ օժտված տեխնոլոգիաներ և այլն:

Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառությունը հատկապես փոքր պետությունների դեպքում կարող է վճռորոշ դեր խաղալ՝ հաշվի առնելով նրանց սահմանափակ ռեսուրսներն ու հնարավորությունները, որոնց պայմաններում վերջիններս առավելության հասնելու համար պետք է շեշտը դնեն որակական ցուցիչների վրա՝ ստեղծելով սպառնալիք հակառակորդի համար կամ հակազդելով վերջինիս կողմից ստեղծված սպառնալիքին (կախված ընտրված քաղաքականությունից): Որպես կանոն փոքր պետությունները հանդիսանում են հզոր պետությունների կողմից մշակված առաջադեմ տեխնոլոգիաների սպառողներ, սակայն ժամանակակից աշխարհում փոքր երկրները կարող են հասնել

հաջողության՝ ճիշտ և ուղղորդված ներդրում կատարելով, օրինակ՝ մարդկային կապիտալի վրա:

Թեև ժամանակակից պատերազմի հստակ սահմանում, որպես այդպիսին չկա, այնուամենայնիվ, կարող ենք անդել, որ այն բնութագրվում է գործողությունների սրընթացությամբ, հեռահար և ճշգրիտ խոցման, լազերային և գերձայնային զինատեսակների կիրառմամբ, հիբրիդային և ասիմետրիկ բնույթով: Վերջին ժամանակներում պատերազմների առնչությամբ առավել հաճախակի են սկսել կիրառվել «ցանցակենտրոն պատերազմներ», «խելացի պաշտպանություն», «կանխարգելիչ պաշտպանություն», «3D» (defence, diplomacy, development) ռազմավարություն, «կոշտ» (hard), «փափուկ» (soft) և «խառը» (smart) ուժերի հայեցակարգեր հասկացությունները, որոնք տարբեր մասշտաբների (լոկալ, տարածաշրջանային) պատերազմներում ներքաշված պետությունների առաջ խնդիր են դնում վերանայել իրենց անվտանգային և պաշտպանական հայեցակարգային փաստաթղթերը, դրանց առնչվող հարաբերությունների կարգավորման օրենսդրավական հիմքերը:

Հայաստանը նույնպես կանգնած է նման խնդրի առաջ՝ հաշվի առնելով այն, որ մեր անվտանգային և պաշտպանական հայեցակարգային փաստաթղթերը, որոնցում նշված են ազգային անվտանգության գլխավոր մարտահրավերները և սպառնալիքները, և թե պետությունն ինչպես է պատրաստվում դիմակայել այդ մարտահրավերներին և չեզոքացնել սպառնալիքները, ընդունվել են դեռևս 2007 թվականին, մինչդեռ դրանից հետո Հայաստանում, տարածաշրջանում և աշխարհում տեղի են ունեցել հիմնարար փոփոխություններ (Ազգային անվտանգության նոր ռազմավարությունը ընդունվել է բոլորովին վերջերս՝ 2020թ. հուլիսին):

ՀՀ հայեցակարգային փաստաթղթերը պետք է առավելագույնս համապատասխանեն ժամանակակից պատերազմների բնույթին և, իհարկե, Հայաստանի անվտանգության համար ուղղակի սպառնալիք ներկայացնող հարևան պետության կողմից ռազմական գործողությունների հնարավոր բնույթին:

Հաշվի առնելով Հայաստանի հանդեպ թշնամական քաղաքականություն վարող Ադրբեյջանի կողմից տարբեր տեսակի սպառնալիքությունների ձեռքբերումը, այդ թվում՝ ամենատարբեր տիպի ԱԹՄ-ներ, հեռահար և ճշգրիտ խոցման հրթիռային համակարգեր՝ «Տոչկա-Ու» (առավելագույն հեռահարությունը 70 կմ) «LORA» (առավելագույն հեռահարությունը 250-300 կմ),

«Պոլոնեզ» համագարկային կրակի ռեակտիվ համակարգեր (առավելագույն հեռահարությունը 200 կմ) և այլն [8] կարելի է ենթադրել, որ Հայաստանի ռազմական ռազմավարության հիմնական ուղենիշն այսօր Ադրբեջանի ստեղծած սպառնալիքներին հակազդումն է և, անկախ այն հանգամանքից, թե ինչպիսին կլինի ռազմական հակամարտությունը՝ լոկալ, թե լայնամասշտաբ, այն հիմնականում համապատասխանելու է ժամանակակից պատերազմների բնույթի ձևաչափին՝ նախորդ պարբերությունում նշված առանձնահատկություններով, ինչպես նաև հակառակորդի կողմից բազմակողմանի և համապարփակ հարձակման բարձր հավանականությամբ [1, էջ 20-21]:

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության (այսուհետ՝ Ռազմավարություն) «Հայաստանի անվտանգային միջավայրը» բաժնում խոսվում է Ադրբեջանի ապակառուցողական դիրքորոշման պատճառով Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի խոչընդոտման և վտանգման մասին՝ նշելով, որ այն արտահայտվում է հակամարտությունն ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառմամբ լուծելու ձգտումներով, առավելապաշտական և անզիջում կեցվածքով, ՀՀ տարածքի հանդեպ անթաքույց հավակնությամբ, հայատյաց քաղաքականությամբ և պատմության խեղաթյուրմամբ: Անդրադարձ է կատարվում նաև 2016թ. ապրիլին Արցախի դեմ սանձազերծված ռազմական գործողություններին և եզրահանգվում. «Հայաստանի հանդեպ թշնամական քաղաքականություն վարող պետության շարունակական սպառնալուծումը վտանգում է տարածաշրջանային խաղաղությունը և կայունությունը»:

Փաստաթղթում վեր են հանված Հայաստանի անվտանգային միջավայրի սպառնալիքները՝ արտահայտելով դրանց անվիճելիորեն փոկապակցվածությունը Ղարաբաղյան հակամարտության հետ. «Ղարաբաղյան հակամարտության համատեքստում Ադրբեջանի կողմից ուժի կիրառումը Հայաստանի անվտանգության հիմնական սպառնալիքն է»: նշված է Ռազմավարությունում: 2020թ. Տավուշյան դեպքերի իրողությունը ցույց տվեց, որ Ղարաբաղյան հակամարտության վերսկսումը միակ սպառնալիքը չէ Ադրբեջանի կողմից: Վերջինս չի խորշում ցույց տալու, որ հավակնություններ ունի նաև Հայաստանի Հանրապետության պետական տարածքների նկատմամբ:

Ռազմավարությունն արձանագրում է նաև, որ ժամանակակից աշխարհում անվտանգային սպառնալիքներն ավելի հաճախ են դրսևորվում հիբրիդային պատերազմների տեսքով՝ ռազմական բաղադրիչներից բացի ներառելով տնտե-

սական, կիբեռ, կեղծ լուրերի և ապատեղեկատվության համալիր գործիքակազմեր:

Ղարաբաղյան հակամարտության՝ մեզ համար ընդունելի հանգուցալուծման, ինչպես նաև Հայաստանի անվտանգային միջավայրի ապահովման նպատակով պաշտպանության և անվտանգության ոլորտներում որպես հակազդող գործիք, կարող ենք դիտարկել տարբեր միջազգային կազմակերպություններին ու կառույցներին Հայաստանի անդամակցությունը և ռազմաքաղաքական, ռազմական և ռազմատեխնիկական համագործակցությունն ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափով:

«Ռազմական սպառնալիքների զսպում և չեզոքացում» բաժնում, որպես պաշտպանական քաղաքականության հիմնական նպատակ նշվում է Հայաստանի պաշտպանության ապահովման գերակայությունների սահմանումն ու իրականացումը՝ ռազմական սպառնալիքները կանխորոշելու, դրանք քաղաքական-դիվանագիտական գործիքակազմով կանխարգելելու, ինչպես նաև պաշտպանական կարողություններով զսպելու և չեզոքացնելու միջոցով: Այստեղ կարևորվում է հակառակորդի քանակական առավելությունը մեր որակական գերազանցությամբ չեզոքացնելու միտումի ընդունումը՝ ռազմական կարողությունների և միջոցների համալիր զարգացման, դրանց առաջանցիկ կիրառման միջոցով: Ավելին՝ կարևորվում է զինված ուժերի արդիականացումը, նրա կառավարման և ղեկավարման համակարգի զարգացումը, կարողությունների ընդլայնումը, ինստիտուցիոնալ արդյունավետության բարձրացումը, երկրի կիբեռանվտանգության մակարդակը, ռազմարդյունաբերության զարգացմանը նպաստող գիտատեխնիկական և տեխնոլոգիական առաջընթացի խթանումը, պատերազմի վարման նոր մոտեցումների ներդրումը, զինված ուժերի պատրաստվածության բարձրացումը, զինձառայողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Ասել է թե՛ այսպիսով փաստաթղթում ուրվագծվում է հնարավոր պատերազմի կամ դրա սպառնալիքի չեզոքացման նպատակով առաջադեմ տեխնոլոգիաների, գիտատեխնիկական նորագույն լուծումների մշակման և/կամ կիրառման, արագընթաց պատերազմների զարգացումներին համահունչ արձագանքելու ունակ ռազմական կառավարման համակարգի առկայության, անձնակազմի մարտական պատրաստվածության մակարդակի ապահովման կարևորությունն ու անհրաժեշտությունը:

Որպես հիբրիդային պատերազմի տարր հանդիսացող տեղեկատվական պայքարի միջոցների զարգացմանը ևս անդրադարձ է կատարվել. «Ժամանակակից աշխարհում ավելի սուր դրսևորումներ են ստանում տեղեկատ-

վական պատերազմները, որոնք ներառում են քարոզչության, մանիպուլյացիաների, կեղծ լուրերի և ապատեղեկատվության գործիքակազմ և հաճախ թիրախավորում են ժողովրդավարական արժեքները: Այս համատեքստում մենք աշխատելու ենք հանրային իրազեկվածության և մեդիագրագիտության մակարդակի բարձրացման ուղղությամբ՝ նպատակ ունենալով հզորացնել տեղեկատվական պատերազմներին հակազդելու հասարակության և պետության կարողությունները» մասնավորապես նշվում է Ռազմավարության 7.11 կետում:

Որպես առաջնային մարտահրավեր նշվում է տեղեկատվական և կիրեռանվտանգության ոլորտը կարգավորող համապարփակ պետական քաղաքականության անկատարությունը, կենսական նշանակության տեղեկատվական ենթակառուցվածքների պաշտպանությունն ապահովող օրենսդրության բացակայությունը, համակարգչային պատահարների արձագանքման կառույցների ինստիտուցիոնալ կարողությունների ոչ բավարար մակարդակը և կիրեռանվտանգության ոլորտը համակարգող կառույցի բացակայությունը:

Ռազմավարությունում հստակեցվում են նաև վերը նշված խնդիրների լուծման ուղիները.

- զարգացնել կենսական նշանակության տեղեկատվական ենթակառուցվածքներ ու թվային ծառայություններ մատուցողների և պետության միջև փոխհարաբերությունների նորմատիվ-իրավական դաշտը,

- չեզոքացնել կենսական կարևոր ոլորտներում և ենթակառուցվածքներում օգտագործվող տեխնոլոգիաներից և տեխնոլոգիական բաղադրիչներից առաջացող խոցելիությունները, նվազեցնել օտար ծագման տեխնոլոգիաների ռիսկերը և զարգացնել ազգային տեխնոլոգիական հենքը՝ այդ թվում նաև տեխնոլոգիաների մատակարարների հետ համագործակցության միջոցով,

- զարգացնելու ազգային տեղեկատվական և կիրեռ կարողությունները:

Կարևոր ենք համարում պաշտպանական ոլորտի գիտական ներուժի բազմակողմանի ներգարվման շեշտադրումը Ռազմավարության դրույթներում՝ «մենք կարևորելու ենք պետության հոգածության տակ գտնվող գիտակրթական համակարգի դերը Հայաստանի՝ որպես բարձր տեխնոլոգիական կենտրոնի զարգացման գործում: Գիտակրթական համակարգի վերակառուցումը այլ նպատակներից զատ մեզ թույլ կտա նաև ստեղծել երկակի նշանակության բարձր տեխնոլոգիական հետազոտություններում գերազանցությունը խթանող, ինչպես նաև երկրի տնտեսության մրցունակության բարձրացմանը, անվտանգության ապահովմանը նպաստող համակարգ»:

Հույժ կարևոր է նաև այն հանգամանքը, որ Ռազմավարությամբ հստակ առաջնայնություն է տրվում ռազմարդյունաբերական համալիրի՝ որպես զինված ուժերի հզորությունների շարունակական ընդլայնման, տնտեսական աճի, գիտական և տեխնոլոգիական առաջընթացի առանցքային գործոնի զարգացմանը: Նշվում է, որ այս ուղղությամբ շեշտը դրվելու է ռազմարդյունաբերության ոլորտում պետական ներդրումների և պատվերների կատարման ու մասնավոր ներդրումների խրախուսման, ռազմարդյունաբերական համալիրի արտադրանքի բազմազանեցման և ծավալների ավելացման, ռազմարդյունաբերության ոլորտում նորագույն ու բարձր տեխնոլոգիաների խորը ներթափանցման վրա: Մա թույլ կտա նվազեցնել Հայաստանի կախվածությունը սպառազինության և ռազմական տեխնիկայի ներկրումներից, ինչպես նաև կտրուկ բարձրացնել հայրենական արտադրության ռազմական և բարձր տեխնոլոգիական ապրանքների մրցունակությունը միջազգային շուկայում:

Ռազմավարությունում ամրագրված է Հայաստանի անվտանգությանը և կայուն զարգացմանը միտված ոլորտային բոլոր փաստաթղթերը, որոնք ունեն անվտանգային բաղադրիչ, բխում են Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթներից և տրամաբանությունից: Այդ փաստաթղթերից անդրադառնանք Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինին (այսուհետ՝ Դոկտրին)՝ ընդունված 2007թ. Դեկտեմբերի 25-ին ՀՀ նախագահի ՆՀ-308-Ն հրամանագրով: Այն նախանշում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի բարեփոխումների ու արդիականացման ուղղությունները հասարակական կյանքի առանձին ոլորտների զարգացմանը համընթաց՝ ձևավորելով Հայաստանի Հանրապետության պաշտպանական ռազմավարությունն ու ռազմական շինարարությունը կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում [2]: Դոկտրինի Նախաբանում հստակեցվում է, որ այն զարգացնում և մանրամասնում է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրի 1-ին կետով հաստատված Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ռազմական ոլորտին վերաբերող դրույթները, այսինքն այն ռազմավարության, որին արդեն փոխարինելու է եկել նորը: Բացի այդ, Դոկտրինում ամրագրված է, որ դրա դրույթներն արտացոլում են ռազմական անվտանգության համակարգի բարեփոխումների ժամանակաշրջանն ու այդ ժամանակաշրջանին բնորոշ առանձնահատուկ նպատակները, իսկ ռազմական անվտանգության համակարգի բարեփոխումները նախատեսվում

Է ավարտին հասցնել 2015 թվականին, որից հետո Դոկտրինը սկզբունքային և նպատակային վերանայման կենթարկվի:

Ավաձից կարող ենք վստահորեն պնդել, որ Դոկտրինում ամրագրված դրույթները և պաշտպանական ռազմավարության ուղենիշերը ժամանակավրեպ են:

Կարծում ենք՝ Դոկտրինին փոխարինող փաստաթղթում առանձնակի անդրադարձ պետք է կատարվի դաշնակիցների և միջազգային կամակերպությունների հետ համագործակցությանը, որը ժամանակակից աշխարհում, ժամանակակից պատերազմների բնույթի նկատառմամբ («փափուկ ուժի» կիրառում, դիվանագիտական լծակների օգտագործում, տեղեկատվական պայքար և այլն), կարող է զսպող դեր ունենալ:

Դաշնակիցների և միջազգային կազմակերպություններին անդամակցության միջոցով և սակառակորդի նկատմամբ առավելություն ձեռք բերելու, հնարավոր պատերազմում հաղթանակ տանելու կամ այդ համագործակցությամբ հակառակորդի կողմից ռազմական գործողությունների դիմելու զսպման առումով «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքով օրենսդրական հիմք է ապահովվել Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա պետությունների զինվորական կազմավորումների և ստորաբաժանումների տեղակայման համար [4]:

Ժամանակակից պատերազմում հաղթանակի հասնելու համար պահանջվում է նաև ռազմական կառավարման համապատասխան համակարգ, որն ըստ էության արտահայտվում է «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմինների, ինչպես նաև կազմակերպությունների միջև երկրի պաշտպանության կազմակերպման գործառույթների ու լիազորությունների տարանջատմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ժամանակակից պատերազմներին բնորոշ սրբնթացությունն ու ռազմական գործողությունների վերսկսման հանկարծակիության էլեմենտը՝ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքով տրված են կարգավորումներ, որոնք հնարավորություն են տալիս արագ արձագանքել ստեղծված իրավիճակին: Այսպես, օրինակ՝ պաշտպանության ոլորտում վարչապետի լիազորությունները սահմանող 9-րդ հոդվածում ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությանն սպառնացող անմիջական վտանգի և (կամ) զինված հարձակման դեպքում վարչապետը կառավարության կողմից զինված ուժերի կիրառման մասին որոշում կայացնելու անհնարինության դեպքում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի առաջարկությամբ կայացնում է որոշում

զինված ուժերի կիրառման պլանը գործողության մեջ դնելու մասին: Իսկ 15-րդ հոդվածով նախատեսվում է, որ ռազմական սպառնալիքներին դիմակայման շրջանակներում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը և զինված ուժերի գլխավոր շտաբի պետը, կարող են որոշում կայացնել զինված ուժերի սահմանափակ, անհետաձգելի, արագ արձագանքման և (կամ) հատուկ առաջադրանք կատարելու նպատակով առանձին ստորաբաժանումների և միջոցների օգտագործման վերաբերյալ: Նույն հոդվածով սահմանվում է, որ անմիջական պատասխան գործողություններ ձեռնարկելու անհրաժեշտության, զինված հարձակումը կասեցնելու և (կամ) դիվերսիոն-հետախուզական խմբի ներթափանցումը կանխելու անհրաժեշտության դեպքում ստորաբաժանման գործողությունների մասին որոշումը կայացնում է տեղում գտնվող ամենաբարձրաստիճան հրամանատարը՝ նախապես համաձայնեցնելով այդպիսի որոշումներն ըստ վերադասության, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հնարավորին չափ սեղմ ժամկետում զեկուցելով վերադաս ղեկավարությանը կայացրած որոշման մասին: Այս մեխանիզմն իրեն արդարացրեց և դրա փայլուն գործարկմանն սկանառես տեղանք 2020թ. հուլիսին Տավուշում տեղի ունեցած մարտական գործողությունների ժամանակ:

Հակառակորդի կողմից հաճախ քաղաքացիական բնակչությանը թիրախավորելու իրողության հաշվառմամբ կարևոր է «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքով պետական և տարածքային կառավարման մարմինների և հատկապես՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների և պարտականությունների սահմանումը, ինչպես նաև պաշտպանության ոլորտում կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) պարտականությունները [5], ինչը հնարավորություն է տալիս կազմակերպելու քաղաքացիական բնակչության ըստ անհրաժեշտության տարհանումը կամ պաշտպանությունը, ինչպես նաև մոբիլիզացիոն աշխատանքները՝ անգամ մարտական գործողությունների հանկարծակիության կամ սրբնթացության դեպքում:

Ժամանակակից ռազմական տեխնիկայի պահանջարկը հնարավորինս ներքին արտադրությամբ բավարարելու կարևորությունն արտացոլված է «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքում, որտեղ որպես ռազմարդյունաբերական քաղաքականության խնդիր նշված է նաև գիտելիքահեն և ժամանակակից արտադրությունների համար հնարավորությունների ստեղծումը [6]:

Կարևոր է նաև Ռազմավարությունում տեղեկատվական և կիրեռանվտանգության

ուրտը կարգավորող համապարփակ պետական քաղաքականության, տեղեկատվական ենթակառուցվածքների պաշտպանությունն ապահովող օրենսդրության, կիրեռանվտանգության ոլորտը համակարգող կառույցի անկատարության կամ բացակայության, ռազմարդյունաբերության զարգացմանը նպաստող գիտատեխնիկական և տեխնոլոգիական առաջընթացի խթանման անհրաժեշտության մասին արձանագրումը, ինչը նշանակում է, որ պետական ամենաբարձր մակարդակով ուշադրության կենտրոնում է լինելու զինված ուժերում գիտատեխնիկական նորամուծությունների, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառության հարցը: Մա անշուշտ կնպաստի հեռահար և ճշգրիտ խոցման, լազերային և գերձայնային զինատեսակների կիրառության հնարավորությունների ավելացմանը (ինչու ոչ՝ նաև հայրենական արտադրության), տեղեկատվական հակապայքարի ուժեղացմանը:

Նշվածի առումով թերևս կարելի է հիշատակել 2019 թվականին ՀՀ պաշտպանության նախարարի, Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) և «Հայ Տեք» կիրեռանվտանգության կենտրոն հիմնադրամի միջև ստորագրված հուշագրի [9] հիման վրա գործակված և 2020 թվականի ամառային գորակոչի շրջանակներում արդեն համալրվող պաշտպանության նախարարության «1991 ստորաբաժանում»-ը: «1991 ստորաբաժանման» կազմավորման նպատակն է ՀՀ զինված ուժերի տեխնոլոգիական գերակայության, զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց շարունակական կրթության, բազմակողմանի զարգացման և մասնագիտական հմտությունների յուրացման հնարավորությունների ապահովումը:

«1991 ստորաբաժանման» զինծառայողները ձեռք կբերեն հիմնարար և գործնական գիտելիքներ ու հմտություններ, որոնց շնորհիվ զորացրվելուց հետո հնարավորություն կունենան անցնել աշխատանքի ՀՀ ՊՆ համապատասխան ստորաբաժանումներում՝ շարունակելով կիրառել ստացած գիտելիքները և զարգացնել դրանք: Կարծում ենք սա կարելի է դիտարկել, որպես զինված ուժերի կարիքների համար զննառայողների գիտական ներուժի նպատակային օգտագործման պետական մոտեցման օրինակ:

Շարունակելով հայեցակարգային փաստաթղթերի՝ ժամանակակից պատերազմների բնույթին համապատասխան լինելու կարևորության թեման՝ նշենք, որ այն առավել լավ է արտացոլված ՀՀ զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագրում [3] (այսուհետ՝ Արդիականացման ծրագիր): Այստեղ հստակ մատնանշվում է, որ գիտության ու տեխնիկայի նվաճումները ասպարեզ են հանել

պատերազմավարման նոր գործիքակազմ, որը հանգեցրել է պատերազմի բնույթի փոփոխության՝ դարձնելով այն ավելի սրընթաց ու կարճատև. «Ինդիքների շոշափելի մասը կատարվում է օդատիեզերական տիրույթում գործող ուժերով ու միջոցներով, էականորեն նվազում են ցերեկային ու գիշերային պայմաններում մարտ վարելու տարբերությունները, ավիացիայի հնարավորությունները թույլ են տալիս նպատակակետերը խոցել առանց ՀՕՊ խոցման գոտի մտնելու, հետախուզական հնարավորությունների ավելացումը թույլ է տալիս տարածքի ամբողջ խորությամբ ապահովել մանրակրկիտ հետախուզություն, առաջին պլան է մղվում տեղեկատվական պայքարը, լայնորեն կիրառվում են հատուկ օպերացիաների ուժերը»:

Որպես ռազմավարական բնույթի ուղեցույց փաստաթուղթ՝ Արդիականացման ծրագիրը ենթադրում է մի շարք ոլորտային առանձին ծրագրերի և ռազմավարությունների մշակում, գիտահետազոտական աշխատանքների և պիլոտային ծրագրերի իրականացում: Բավականին համապարփակ կանխատեսումներ են արված 2018-2024 թվականների համար, որոնց զարգացման միտումների նկատառմամբ ուղենշված են Հայաստանի Հանրապետության կողմից ձեռնարկվելիք միջոցառումները՝ զինված ուժերի համալրման, ռազմավարական դաշնակցային, անվտանգության ոլորտում գործընկերային հարաբերությունների, նոր տեխնոլոգիաների վրա հիմնված գիտատար տնտեսական ճյուղերի զարգացման ուղղությամբ:

Արդիականացման ծրագրում ՉՈւ արդիականացման առաջնային նպատակը սահմանելիս հստակ նշվում է մարտավարական, օպերատիվ և ռազմավարական օղակներում գործողությունների ամբողջականությունը՝ դրանք համադրելով ժամանակակից պատերազմների դրսևորումների ու տեխնիկական հնարավորությունների հետ:

Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ հայեցակարգային փաստաթղթերում ժամանակակից պատերազմներին բնորոշ դրսևորումներին արձագանքելու, սպառնալիքները կանխատեսելու և զսպելու ուղենիշների արտացոլումը դեռևս ամբողջական կամ բավարար չէ: Այդ փաստաթղթերում արտացոլված են՝ հատկապես հակառակորդի կողմից հնարավոր ռազմական գործողությունների բնույթի, ռազմական կառավարման ճկուն համակարգի, միջազգային համագործակցության հնարավորությունները (այստեղ խոսքը վերաբերում է հատկապես Ռազմավարությանը, Արդիականացման ծրագրին, «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքին), սակայն, ըստ էության, նոր բնույթի պատերազմներին արձագանքը պետք է

արտահայվի Պաշտպանական ռազմավարական վերանայման (այսուհետ՝ ՊՌՎ) շրջանակներում: Հարկ է նշել, որ ՊՌՎ գործընթացն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում սկսած 2008թ.-ից և ներկայումս իրականացվում է վերջին՝ 5-րդ փուլը: Մշակվող ՊՌՎ-ում և Դոկտրինում հարկ է առանձնակի ուշադրություն դարձնել նոր պատերազմների բնույթին՝

- կրեռնետիկական պատերազմներ,
- քիչ տեսանելի տեխնոլոգիաներ,
- ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցներ,
- ավտոնոմ անօդաչու սարքերից համակարգեր,
- կոգնիտիվ մակարդակում հակառակորդի վրա ազդեցության տեխնոլոգիաների լայն կիրառում:

2007 թվականին ընդունված Դոկտրինն ունի պաշտպանողական բնույթ, այնինչ ՀՀ պաշտպանության նախարար Դ. Տոնոյանի նոր կարգախոսը՝ «նոր պատերազմ՝ նոր տարածքներ» փոխում է տրամաբանությունը և կարելի է ասել զինված ուժերի կիրառման խնդիր է ոչ միայն պաշտպանության ապահովումը՝ պաշտպանվողի դիրքերից գործողությունների պլանավորումն ու իրականացումը, այլ նաև՝ սպառնալիքների չեզոքացման նպատակով կիրառման հնարավորության դիտարկումը: Կարծում ենք նախարարի «նոր պատերազմ՝ նոր տարածքներ» հայտարարությունն արվել է «խելացի պատերազմի», որակը քանակին հակադրելու անհրաժեշտության, գործողությունների ասիմետրիկ բույթի համատեքստում:

Ինչևէ, ժամանակավրեպ է Ռազմավարության մեջ ժամանակակից պատերազմների բնույթին առավել համակողմանի անդրադառնալու անհրաժեշտության մասին խոսելը: Հայաստանն այլընտրանք չունի, քան ճշգրտելու իր ռազմական քաղաքականությունը (որը կարտացոլվի Ռազմական դոկտրինում) նշավժ միտումներին համապատասխան, մասնավորապես՝ վերջին ժամանակներում առավել ակնհայտ դիտարկվող միտումներին՝ լոկալ հակամարտությունները ռազմական ուժի կիրառմամբ լուծելու հակառակորդի դիրքորոշմանը համապատասխան:

Ժամանակակից պատերազմների բնույթի հաշվառմամբ՝ երբ սպառնալիքը կարող է լինել տնտեսական, գիտատեխնիկական, հասարակական, սոցիալական, մշակութային և այլն, անհրաժեշտ է ունենալ հարձակվողական գործողությունների (ոչ միայն բուն ռազմական գործողությունների, այլ նաև՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման, կիրբեր հարձակումների, «փափուկ ուժի» կիրառման մասով) հստակ պլան, դրան համապատասխան ենթակառուցվածքներ:

Օգտագործված գրականություն ցանկ

1. **Հարությունյան Գ. Է.** «Հայկական ռազմաարդյունաբերության զարգացման առաջնահերթությունները ժամանակակից պատերազմների բնույթի հաշվառմամբ», ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարան, 2020 թ., «Հայկական ռազմաարդյունաբերության զարգացման ժամանակակից մարտահրավերները և հնարավորությունները» գիտաժողովի նյութեր, էջ 20-21,
2. ՀՀ նախագահի 2007թ. դեկտեմբերի 25-ի ՆՀ-308-Ն հրամանագրով հաստատված Ռազմական դոկտրին, նախարան, աղբյուրը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=41116>
3. ՀՀ նախագահի 2018թ. փետրվարի 17-ի ՆՀ-103 -Ա հրամանագիր
4. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-196-Ն), հոդված 5, 4-րդ մաս,
5. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-196-Ն), հոդվածներ՝ 11, 12, 13,
6. «Ռազմաարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-16-Ն) հոդված 3,
7. **Клаузевиц К.** Часть I, глава I, раздел 28. // О войне = Clausewitz K. Vom Krieg. 1832/34. — Москва: Госвоениздат, 1934.
8. <http://www.kavkazoved.info/news/2018/11/28/verojat-na-li-vojna-v-nagornom-karabahe-i-ee-vozmozhnyescenarii.html>
9. <http://www.mil.am/hy/news/6898>

*Տժանա/Հանձնվել է՝ 27.10.2020
Րեցենզրոանա/Գրախոսվել է՝ 10.11.2020
Քրնյաա/Ընդունվել է՝ 15.11.2020*